ԲԱՆԱՎԵՃ

ՎԵՐԱՆԱՅԵԼ ԱՆՑՅԱԼԸ, ԽՈՐՀԵԼ ՆԵՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ*

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏՅԱՆ

Հայ-թուրքական հարաբերությունների հարցը զգացական տեսանկյունից ունի խոցող, քաղաքական տեսանկյունից՝ պայթուցիկ և մտավորական տեսանկյունից՝ խրթին բնույթ: Խնդիրը վերաբերում է երկու ժողովուրդների հիշողությանը, ինքնությանը և հավաքական ճակատագրին, ժողովուրդներ, որոնք փոխադարձաբար նզովել են միմյանց, բայց դատապարտված են եղել ապրել միասին, լինի այդ իրենց հայրենի հողում կամ էլ սփյուռքի համայնքներում, ուր իրենք վայելում են Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների իրենց հյուրընկալած երկրների քաղաքացիությունը: Հայերի և թուրքերի միջև անհամաձայնությունը հիմնականում կապված է ցեղասպանության խնդրի հետ:

Բայց ո՞րն է ցեղասպանության հարուցած խնդիրը: Արդյո՞ք հարցը վերաբերում է պատմության պարզաբանմանը, Օսմանյան կառավարության և կամ հայ ղեկավարների գործողություններին և վարած քաղաքականության բնույթին: Արդյո՞ք զոհերի թիվն է խնդրի առարկան: Եվ կամ էլ մտադրվածության հարցը: Անհամաձայնությունը վերաբերում է անցյալում կատարված այդ իրադարձության սահմանմա՞նը, թե՞ նրան տրվող տերմինին: Ինչո՞վ կարող են արխիվային փաստաթղթերը, պատմական տվյալները կամ տրամաբանական ապացույցները փոփոխել այդ իրադարձության ըմբռնումը: Ի՞նչ հետևանքներ կունենար արդյոք «տղբալի իրադարձություններ», «քաղաքացիական պատերազմ», «բռնագաղթ և ջարդեր» կամ «տղբերգություն» պիտակները «ցեղասպանություն» տերմինով փոխարինելը:

Եթե գոյություն ունենար ընդհանուր համաձայնություն Օսմանյան քաղաքականության ցեղասպանական բնույթի վերաբերյալ, ապա արդյո՞ք նույնքան կարևոր կհանդիսանար շարունակել արդարացնել այդ քաղաքականությունը: Եվ եթե այդ քաղաքականությունը արդարացվեր, ապա

* Զեկուցումը կարդացվել է 2000թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատի շենքում կազմակերպված «Հայ-թուրքական երկխոսությունը հայկական հարցի մասին» միջազգային գիտաժողովում:

արդյո՞ք 1915-ի դեպքերը չէին հանդիսանա ցեղասպանություն:

Այլ կերպ ասած, մենք կանգնած ենք գիտական կամ տերմինոլոգիական մի խնդրի առջև, որը կարող է լուծվել գիտական և մտավորական կամ, գուցե, միախառն ջանքերով: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ այդ հարցը չի լուծվել մինչև այսօր:

Իսկական խնդիրը, իմ կարծիքով, նյութի վերաբերյալ գոյություն ունեցող ճառախոսությունից բխող փոխադարձ անհասկացողությունն է: Խոսքը չի գնում պարզապես մեկ պատմության վերաբերյալ հակադիր տեսակետների, այլ երկու պատմությունների մասին: Կարծես թե երկու զատ ժողովուրդների ոտիները խաչաձևվել են 1915-ին, ամեն մեկը կատարելով իր բնույթից բխող մի որոշակի և անխուսափելի դեր: Յուրաքանչյուրն ի նպաստ իրեն օգտագործել է «զոհի և դահճի» գաղափարը:

Ինձ թվում է, որ մենք պետք է սկսենք պատմության գաղափարական հիմքերը վերանայելուց:

Ջանազան պատմությունների, պարսավանքների և սուգի արտահայտությունների միջև պակասում են ուսումնասիրությունները այդ անվիճելի-որեն պատմական իրադարձության պատճառի կամ պատճառների վերաբերյալ:

Գերակշռող տեսակետը, որը բացատրում է դեպքերը իբրև երկու ազգայնական շարժումների բախում, բավարար չափով հաշվի չի առնում հայերի, իբրև Օսմանյան կայսրության քաղաքական համակարգի բաղադրիչ մի մաս, կատարած տարբեր դերերը: Հնարավոր է արդյոք վերանայել այդ ժամանակաշրջանի պատմությունը, առանց անցյալի մեջ տեղադրելու այն:

Ըստ իս, Հայկական հարցը ունի երկու կողմ. ազգային և քաղաքական:

Հնարավոր չէ հասկանալ ազգային կողմն առանց նկատի առնելու երեք այլ ոչ թե երկու ամբողջություններ. Օսմանյան պետության և նրա երիտթուրք ղեկավարների, հայերի, և Մեծ տերությունների բարդ հարաբերությունները: Օսմանյան կայսրությունը, հայերին ճնշող պետությունը, Մեծ տերությունների իմպերիալիզմի զոհն էր: Հայերը Օսմանյան պետության զոհն էին, բայց փրկություն էին որոնում Մեծ տերությունների մոտ: Մեծ տերությունները նոր քաղաքակրթության, առաջադիմության և բավականության իրենց ներշնչումներով, մասնատում էին Օսմանյան կայսրությունը:

Քաղաքական կողմը կապված է հիմնականում հայ քաղաքական կուսակցությունների պաշտպանած ազատական ծրագրի հետ, կուսակցություններ, որոնք երբեմն դիմում էին զինված պայքարի: Հայ քաղաքական կուսակցությունները հանդիսանում էին ժողովրդական հիմք ունեցող միակ քաղաքական ուժը, որը հավատ էր ընծայում դեռ ազատական և խորհրդարանական քաղաքական ծրագրին: Այս առումով հայերը կազմում էին Օսմանյան քաղաքական դասակարգի ձախ թևը: 1911թ. հայերը Օսմանյան Թուրքիայում վերջիններն էին, որ հաստատ կապված էին մնացել ազատական ժողովրդավարությանը, ներկայացուցչական խորհրդարանին և, ամենից առաջ, գյուղական բարեփոխումներին: Հայ բարեփոխական շարժումը միակն էր կայսրությունում, որ մտահոգված էր պետության ոչ միայն քաղաքական, այլ նաև հասարակական և տնտեսական ինքնությամբ: Երիտթուրքերի համար հայկական ծրագիրը հանդիսանում էր մի ուղիղ ճանապարհ դեպի պետության թուլացում: Մինչդեռ թուրքական վերնախա-

վի համար գլխավոր նպատակը ուժեղ պետության գոյության ապահովումն էր, բարեփոխություններով կամ Մեծ տերություններին դիմադրելու ընդունակ մի պետության վերաստեղծումով: Հայերի համար կարևորը բարեփոխություններին հասնել էր, լիներ այն զինված պայքարի միջոցով, Մեծ տերությունների միջամտությամբ և կամ էլ երկուսը միասին:

Այս երկու տեսակետները իրար բախվեցին այն ժամանակ, երբ երիտթուրքերը սկսեցին պետության գոյատևումը կապել նրա թուրք բնակչության առաջնայնության հետ, այլ ոչ թե պետության բազմազգ բնույթի: Հայերը և նրանց պաշտպանած ազատականությունը մատնանշվեցին իբրև Օսմանյան կայսրության ամեն չարիքի պատճառ, իբրև մի ախտ, որը պետք էր արմատախիլ անել:

Մեծ տերությունների և բալկանյան ազգայնականության դերը և պատասխանատվությունը ցեղասպանության հարցում դեռևս չի հաստատվել ինչպես հարկն է, թեև պարզ էր, որ նրանք վճռական են հանդիսացել երիտթուրքերի գաղափարախոսության զարգացման համար: Այդուհանդերձ, իբրև ճնշման ծայրահեղ միջոց, ցեղասպանությունը միմիայն հայկական խնդիր չէ. այն հանդիսանում է մի խնդիր նաև թուրքական պատմության համար, վերաբերում է նաև Մեծ տերություններին և նրանց հաջորդած պետություններին:

Ցեղասպանության ճանաչման համար պայքարը և Թուքիայի հակազդեցությունը շատ առումներով հանդիսացել են Օսմանյան կայսրության վերջին շրջանում գոյություն ունեցող հայ-թուրքական հարաբերությունները բնորոշող վատթարագույն կողմերի արտացոլումը:

Հայերը մինչև այժմ կույր և համառ դիրքորոշում են ցուցաբերել ցեղասպանության հարցում: Նրանք մեղադրել են բոլոր, ինչպես անցյալի, այնպես էլ այժմյան թուրքերին, ոճրին մասնակցելու մեջ: Կարծես թե բոլոր հայերը պայքարի էին ելել բոլոր թուրքերի դեմ: Ցեղասպանության հավաքական հիշողությունը դարձել է սփյուռքի ինքնության մի կարևոր մասը: Այն հանդիսանում է նաև սփյուռքը կազմակերպող և համախմբող գլխավոր սկզբունքը: Թուրք պետության օրինականությունը դարձվում էր խնդրի առարկա: Ի վերջո, Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը պահանջվում էր ոմանց կողմից իբրև օրինական հիմք և առաջին քայլ կորցված հողերի վերադարձի համար: 1973-ից 1983թ. ընկած ժամանակամիջոցում պայքարը ահաբեկչական բնույթ ստացավ, թիրախ դարձնելով թուրք դիվանագետները և թուրքական հաստատությունները:

Ավելին, ցեղասպանության ճանաչման համար հայկական պայքարը ձգտում էր հասնել Արևմուտքի պաշտպանությանը թուրքական պետության դեմ ճնշում գործադրելու համար:

Իր պատմության առաջին օրից ի վեր Թուրքիայի հանրապետությունը որդեգրեց ուրացման քաղաքականություն: Նկատի ունենալով փաստերի վերաբերյալ տիրող անտեղյակությունը, հետևանք պետության գործադրած ջանքերի, թուրքերի համար ոճրի պատասխանատվությունից պաշտպանվելու հիմնական միջոցը հանդիսանում էր պարզապես նրա մերժումը: Որևէ թուրքի կողմից այդ ոճրի ճանաչումը հավասար էր իր ազգության, իր ինքնության դավաճանության: Սակայն Թուրքիան գնաց ավելի հեռուն: Թուրք պաշտոնական պատմաբանները խնդրի առարկա դարձրին պատմության մեջ հայ ազգի կամ հայկական պետության գոյությունն անգամ: Այդ պահից ի վեր, մնում էր միայն մի քայլ անել դեպի Հայոց ցեղասպանու-

թյան ճանաչման պայքարը Թուրքիայի տարածքային ամբողջականության և ապահովության դեմ իբրև սպառնալիք դիտելը: Դա էլ, իր հերթին, եկավ սնուցանելու այսպես ասված «տղջամիտ մտահալածանքը» Սևրի դաշնագրի դեմ, որով ներշնչված է Թուրքիայի արտաքին քաղաքականությունը և որով արդարացվում է «ուժեղ պետության» գոյապահպանումը:

Կարելի է ասել, թե գտնվում ենք մի փակուղու առջև, որովհետև երկու կողմերն էլ, թվում է թե զբաղված են ավելի շատ ինքնին հարցով, քան թե նրան մի լուծում որոնելով:

Շատ նշանակալից է այն հանգամանքը, որ Հայաստանի անկախությունից ի վեր, պատմության մեջ առաջին անգամ, սկսեց շոշափվել ցեղասպանության հարցը հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների շրջանակում, այլ ոչ թե, ընդհակառակը, հայ-թուրքական հարաբերությունների ցեղասպանության և նրա ճանաչման շրջանակում:

Անկախությունը և ցեղասպանությանը հատկացված կենտրոնական տեղը հայկական քարոզչության մեջ, գլխավորաբար սփյուռքում, բայց նաև Հայաստանի որոշ շրջանակներում, բախվել են Հայաստանի անկախացման ակունքներին: Անցումը հակահամայնավարությունից դեպի հակաթուրք տրամադրություններ սփյուռքի մի մեծ մասի մոտ առաջ բերեց այնպիսի մի անհանգստություն, որ ոմանք նույնիսկ ընդդիմացան Խորհրդային Հայաստանի քաղաքացիների Խորհրդային Միությունից անջատելու և Հայաստանը մի անկախ պետություն դարձնելու որոշմանը: Երկիրը չի կարող իրեն պաշտպանել, ասում էին նրանք, Թուրքիայի նման մի հետադեմ երկրի հանդեպ, որը չի վարանի հարձակվել անկախացած Հայաստանի վրա և բնաջնջել մնացած հայերին: Նույն ձևով, անկախության հակառակորդ, այսինքն Մոսկվային նպաստավոր ուժերը, փորձեցին խափանել անկախության շարժումը, թափահարելով պանթուրքիզմի և նոր ցեղասպանությունների ուրվականը:

Այդ ժամանակամիջոցում Հայաստանի անկախության կողմնակից Հայոց Համազգային Շարժման ղեկավարները հանգել էին այն եզրակացության, թե Թուրքիայի հետ հարաբերությունները կարող էին և պե՛տք է նորմալացվեին և որ ո՛չ ցեղասպանությունը և ո՛չ էլ նրա ճանաչումը չէին կազմելու հայկական արտաքին քաղաքականության և Թուրքիայի հետ հարաբերությունների քաղաքական հիմքը: Հայաստանը 1991թ. սեպտեմբերին կայացած հանրաքվեի ընթացքում իր ճնշող մեծամասնությամբ քվեարկեց ի նպաստ իր անկախության:

Տարօրինակորեն, Թուրքիան էր, որ առաջինը շոշափեց ցեղասպանության հարցը անկախությանը հաջորդած ժամանակաշրջանում՝ թուրք-հայկական հարաբերությունների շրջանակում: Թուրք պաշտոնական անձինք Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորեցին հայերի կողմից ցեղասպանության փաստի բացահայտ ուրացմամբ և ի նպաստ նրա ճանաչման տարվող գործունեությունից հրաժարմամբ: Ավելին, անհրաժեշտ էր, որ Հայաստանը համոզեր սփյուռքին հետևել իրեն այդ հարցում: Սակայն, այն պահին, երբ առաջին թուրք պաշտոնական պատվիրակությունը 1992թ. հուլիսին գնաց Երևան պաշտոնական բանակցությունների համար, Թուրքիան հրաժարվել էր այս նախապայմաններից: Դրա արդյունքը եղավ այն, որ մի համաձայնություն կայացվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար բանակցություններ սկսելու նպատակով: Բանակցությունները սկսվեցին

աշնանը և շարունակվեցին ամբողջ ձմեռ: Սակայն, Քելբաջարի գրավումը 1993թ. հայկական ուժերի կողմից վերջ դրեց այդ բանակցություններին:

Այդ ժամանակից ի վեր Թուրքիան ի հայտ է բերում հակասական վերաբերմունքներ Հայաստանի հանդեպ: Մի կողմից նա Ղարաբաղի բանակցություններում ամբողջականորեն նեցուկ է լինում Ադրբեջանի կարծր դիրքորոշմանը՝ մեծ մասամբ ադրբեջանցիների հետ ազգային նմանությունների պատճառով, այն աստիճան, որ Հայաստանի հանդեպ իր քաղաքականությունը դարձրել է իր ադրբեջանական քաղաքականության պատանդը: Մյուս կողմից, նա թույլատրում է իր տարածության վրայով Հայաստան հասցնել Եվրոմիության կողմից վերջինիս հատկացված հացահատիկը 1992-1993թթ. սարսափելի ձմռան ընթացքում, ցույց տալով, այդպիսով, այդ երկրի հետ բարիդրացիական նորմալ հարաբերություններ հաստատելու իր կամքը:

Նույնիսկ եթե դիվանագիտական հարաբերությունները դեռևս հաստատված չեն երկու երկրների միջև, ապա հաճախ զգույշ, ոչ պաշտոնական բայց առողջ մի երկխոսություն է հետապնդվել Լևոն Տեր-Պետրոսյանի ողջ նախագահության ընթացքում: Ցեղասպանության հարցը բարձրացվել է տարբեր առիթներով, ոչ պաշտոնական ձևով, այնպես, ինչպես ընդհանուր շահերից բխող այլ հարցեր:

Տարբերությունները շարունակում էին գոյություն ունենալ: Հայաստանը թուրքական դիրքորոշումը համարում էր մի արգելակ Ղարաբաղի խաղաղության գործընթացում, իսկ Թուրքիան հայկական քաղաքականությունը Ղարաբաղում համարում է զավթողական: Չնայած այս տարբերություններին, երկու երկրները պահպանեցին երկխոսությունը մի շարք հարցերի վերաբերյալ: Այդ երկխոսությունը, գուցե ավելի պաշտոնական ձևով, թվում է թե շարունակվում է այսօր: Քոչարյանի կառավարությունը կարծում է, թե կարող է հասնել Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացմանը, շարունակելով հանդերձ իր ջանքերը ցեղասպանության միջազգային ճանաչման համար:

Տարածաշրջանում ստրատեգիական շահերի առաջացմամբ, հայ-թուրքական հարաբերությունները ստացան մի նոր նշանակություն: Աշխարհաքաղաքականության որոշ տեղական մասնագետներ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատման և սահմանների բացման մեջ, ներառյալ երկաթուղային կապը, տեսնում են մի վտանգ իրենց սեփական շահերի համար: Ցեղասպանության ճանաչումը մի խաղաքարտ է, որը ոմանք փորձում են շահագործել թուրք-հայկական հարաբերությունների նորմալացմանը խանգարելու նպատակով:

Թվում է, թե ճանաչմանն ի նպաստ և դեմ մղվող պայքարում երկու կողմերն էլ կրկնում են անցյալի տրամաբանությունը իրենց արդարացնելու համար: Բայց պետք է դուրս գալ այս հոռի շրջանակից: Դա պահանջում է վերանայել պատմությունը և խորհել ներկայի մասին: Կան որոշ նշաններ, որ դա արդեն տեղի է ունենում: Այնուամենայնիվ, մենք պետք է որոշենք ինքներս լուծել այդ խնդիրը և չփախցնենք նորմալացման այս նոր առիթը: